# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Կալիֆոռնիա նահանգի կողմից և կառավարվում է CalOSBA-ի կողմից:




# ԾՐԱԳՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Թարմացվել է՝ 11.14.22)

# Ծրագրի համառոտ նկարագրություն

Միջոցառումների անցկացման վայրերի ֆինանսավորման Կալիֆոռնիայի դրամաշնորհային ծրագիրը («Ծրագիր») նպատակ ունի աջակցել COVID-19-ից տուժած **սահմանված չափանիշներին համապատասխանող կենդանի միջոցառումների անցկացմանը՝** օգնելով դրանց շարունակական գործունեությանը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՉԱՓԸ

Սույն Ծրագրով տրամադրվող դրամաշնորհները պետք է կազմեն **երկու հարյուր հիսուն հազար դոլարից ($250 000) պակաս <u>կամ</u> հայտատուի վաստակած համախառն եկամտի 20 տոկոսը (20%)** 2019 թ. հարկային տարվա համար Կալիֆոռնիայում**:**

ՈՒՄ Է ՏՐՎԵԼՈՒ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնահերթության համար որպես հիմք կընդունվեն հետևյալ չափանիշները՝ որքանով դա թույլատրվում է բոլորի համար հավասար հնարավորությունների պաշտպանության մասին նահանգային և դաշնային օրենքներով՝

Դրամաշնորհի տրամադրման առաջնահերթությունը տրվելու է սահմանված չափանիշներին համապատասխանող այն անկախ կենդանի միջոցառումներին, որոնք համապատասխան փաստաթղթային հիմնավորմամբ ներկայացնում են իրենց հաշվետու ժամանակաշրջանում վաստակած համախառն եկամուտների նվազում՝ համեմատած 2020թ.-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում և 2019թ.-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում Կալիֆոռնիայում վաստակած համախառն եկամուտների հետ:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- Սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառումների կազմակերպիչները պետք է լրացնեն նոր և առանձին դիմում՝ այս ծրագրի շրջանակներում հատկացվող դրամաշնորհի համար, նույնիսկ եթե նրանք արդեն դիմում են ներկայացրել COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված Կալիֆոռնիայի փոքր բիզնեսի աջակցության դրամաշնորհային ծրագրի համար՝ համաձայն Կալիֆոռնիայի Կառավարության օրենսգրքի 12100.83 բաժնի:

- Եթե սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման անցկացման համար դրամաշնորհ է տրվել COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված Կալիֆոռնիայի փոքր բիզնեսի աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ համաձայն Կալիֆոռնիայի Կառավարության օրենսգրքի 12100.83 բաժնի, այդ դրամաշնորհի գումարը պետք է հանվի այս ծրագրի շրջանակներում տրվող դրամաշնորհի գումարից: Եթե Կալիֆոռնիայի Կառավարության օրենսգրքի 12100.83 բաժնի համաձայն հատկացված դրամաշնորհն ավելի մեծ է, քան այս ծրագրի շրջանակներում տրված գումարը, ապա սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման անցկացման համար դրամաշնորհ չի տրամադրվի այս ծրագրով և ոչ մի գումար էլ չի հանվի:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# *«Սահմանված չափանիշներին համապատասխանող միջոցառման անցկացման վայրի»* սահմանումը

Այս Ծրագրի նպատակների համար «***սահմանված չափանիշներին համապատասխանող միջոցառման անցկացման վայր***» նշանակում է այն վայրը, որը համապատասխանում է հետևյալ նկարագրությանը՝

1. Ներկայացման և հանդիսատեսի համար նախատեսված կոնկրետ տարածք:

2. Անհրաժեշտ սարքավորումներ, ձայնի հնչեղության ապահովման և լուսավորության համակարգ:

3. Ներգրավված են մեկ կամ մի քանի անձինք, որոնք զբաղվում են հետևյալ մասնագիտական գործերից ոչ պակաս քան երկուսով՝
   - Ձայնային օպերատոր:
   - Ամրագրման մենեջեր:
   - Փրոմոութեր:
   - Բեմավար:
   - Անվտանգության աշխատողներ:
   - Դրամարկղի մենեջեր:

4. Վայրը հանդիսանում է հայտատուի երեք ամենաշատ եկամուտ բերող հաստատություններից, վայրերից կամ ակումբներից մեկը:

5. Ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող կամ նրա կողմից շահագործվող վայր, որտեղ ներկայացվում են անվճար միջոցառումներ, միջոցառումները կազմակերպվում և կառավարվում են հիմնականում վճարվող աշխատողների, այլ ոչ թե կամավորների կողմից:

# *«Սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման»* սահմանումը

Այս Ծրագրի նպատակների համար «***սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառումը***» վերաբերում է այնպիսի սուբյեկտի գործունեությանը, որը համապատասխանում է հետևյալ նկարագրությանը՝

1. Հանդիսանում է անհատ ձեռնարկատեր՝ C-կորպորացիա, S-կորպորացիա, կոոպերատիվ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գործընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերություն կամ գրանցված 501(c)(3) շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը համապատասխանում է Կալիֆոռնիայի Կառավարության օրենսգրքի 12100.82 բաժնի (g) ենթաբաժնի (1) կետի (B)-ից մինչև (F) ենթակետը ներառյալ սահմանված չափանիշներին:

2. Նշված է Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) կամ Հարկերից ազատված սուբյեկտների ազգային դասակարգման (NTEE) հետևյալ կոդերից մեկով՝
   - 512131 - Կինոթատրոններ (բացի շրջիկ կինոներից):
   - 512132 - Շարժական կինոթատրոններ:
     - Սուբյեկտը, որը մտնում է սույն կետի մեջ, պետք է լինի վավերական շարժական կինոթատրոն: Սույն կետի նպատակների համար «վավերական շարժական կինոթատրոն» նշանակում է կոմերցիոն նպատակներ հետապնդող անփոփոխ շարժական կինոթատրոն, որի հիմնական գործառույթն է կինոֆիլմերի բացօթյա ցուցադրությունը հանդիսատեսի համար մեքենաներում՝ պրոֆեսիոնալ թվային կինեմատոգրաֆիայի գործիքների (DCI), այդ թվում՝ համապատասխան թվային պրոյեկտորների կամ 35 մմ-անոց կամ 70 մմ-անոց ժապավենների օգնությամբ:
   - 7111 – Կատարողական արվեստի ընկերություններ:
   - 711110 - Թատերական ընկերություններ ու «Թատրոն և ընթրիք» տիպի ներկայացումներ ցուցադրող թատրոններ:
   - 711120 – Պարային ընկերություններ:
   - 711130 – Երաժշտական խմբեր և արտիստներ:
   - 711211 – Սպորտային թիմեր և ակումբներ:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# *«Սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման»* սահմանումը

- 7113 - Կատարողական արվեստի, սպորտային և նմանատիպ միջոցառումների կազմակերպում:
- 711310 - Կատարողական արվեստի, սպորտայինի և նմանատիպ միջոցառումների կազմակերպում հաստատությունում:
- 711320 - Կատարողական արվեստի, սպորտայինի և նմանատիպ միջոցառումների կազմակերպում ոչ հաստատությունում:
- 7139 – Զվարճանքի և ժամանցի այլ ոլորտներ:
- 713990 – Զվարճանքի և ժամանցի մնացած բոլոր ձևերը:
- 722410 – Խմելու վայրեր (ալկոհոլային խմիչքներ):
- 722511 – Լրիվ սպասարկմամբ ռեստորաններ:

- A20 – Արվեստ, մշակութային կազմակերպություններ՝ բազմաֆունկցիոնալ:
- A23 – Մշակութային, էթնիկական իրազեկում:
- A25 – Արվեստի կրթություն:
- A50 –Թանգարաններ:
- A54 – Պատմության թանգարաններ:
- A56 – Բնագիտություն, բնագիտական թանգարաններ:
- A60 – Կատարողական արվեստի կազմակերպություններ:
- A61 –Կատարողական արվեստի կենտրոններ:
- A62 –Պար:
- A63 – Բալետ:
- A65 – Թատրոն:
- A68 – Երաժշտություն:
- A69 –Սիմֆոնիկ նվագախմբեր:
- A6A – Օպերա:
- A6B – Երգեցողություն, խմբերգ:
- A6C – Երաժշտական խմբեր, համույթներ:
- A90 – Արվեստի մատուցման կազմակերպություններ և գործունեություն:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# *«Սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման»* սահմանումը

3. Հանդիսանում է հետևյալներից մեկը՝
   - Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որը համապատասխանում է հետևյալ երկու չափանիշներին՝
     - Որպես բիզնեսի հիմնական գործունեություն՝ կազմակերպում, խթանում, արտադրում, ղեկավարում կամ վարում է կենդանի համերգներ, կատակերգական շոուներ, թատերական բեմադրություններ կամ այլ միջոցառումներ՝ կատարող արտիստների մասնակցությամբ համապատասխան վայրում, որտեղ առկա են հետևյալ երկու պայմանները՝ (ա) տոմսը կամ մուտքը վճարովի է, և (բ) կատարողները վարձատրվում են։
     - Ֆիզիկական անձի կամ կազմակերպության ստացած հասույթի առնվազն 70 տոկոսը գոյանում է կատարված ծախսերի փակման, տոմսերի վաճառքի, ներկայացումից ստացված վճարների, ներկայացման ծախսերի փոխհատուցման, կամ միջոցառման ժամանակ խմիչքների, սննդի կամ ապրանքների վաճառքի հաշվին։
   - Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որը, որպես հիմնական ձեռնարկատիրական գործունեություն՝ միջոցառման տոմսերը հասանելի է դարձնում հանրությանը միջոցառման օրվանից ոչ պակաս, քան 30 օր առաջ, և որը պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝
     - Որպես բիզնեսի հիմնական գործունեություն՝ կազմակերպում, խթանում, արտադրում, ղեկավարում կամ վարում է կենդանի համերգներ, կատակերգական շոուներ, թատերական բեմադրություններ կամ այլ միջոցառումներ՝ կատարող արտիստների մասնակցությամբ համապատասխան վայրում, որտեղ առկա են հետևյալ երկու պայմանները՝ (ա) տոմսը կամ մուտքը վճարովի է, և (բ) կատարողները վարձատրվում են։
     - Կատարողները վճարվում են այն գումարի չափով, որը հիմնված է վաճառքի տոկոսի, գրավոր կամ ստանդարտ պայմանագրի կամ այլ փոխշահավետ պաշտոնական համաձայնագրի վրա։

- Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որը համապատասխանում է հետևյալ երկու չափանիշներին՝
  - Որպես հիմնական բիզնես գործունեություն՝ կազմակերպում, խթանում, արտադրում, ղեկավարում կամ անցկացնում է կենդանի սպորտային միջոցառումներ՝ սահմանված չափանիշներին համապատասխանող վայրերում, որտեղ առկա են հետևյալ երկու պայմանները՝ (ա) կատարված ծախսերը փակվում են տոմսերի վաճառքի կամ մուտքավճարի հաշվին, և (բ) կատարողները վարձատրվում են։
  - Ֆիզիկական անձի կամ կազմակերպության ստացած հասույթի առնվազն 70 տոկոսը գոյանում է կատարված ծախսերի փակման, տոմսերի վաճառքի, ներկայացումից ստացված վճարների, ներկայացման ծախսերի փոխհատուցման, կամ միջոցառման ժամանակ խմիչքների, սննդի կամ ապրանքների վաճառքի հաշվին։
  - Ֆիզիկական անձը կամ կազմակերպությունը չի հանդիսանում խոշոր լիգա, պրոֆեսիոնալ սպորտային թիմ կամ ակումբ, և չի պատկանում խոշոր լիգայի, պրոֆեսիոնալ սպորտային թիմի կամ ակումբի։

# Սահմանված չափանիշներին չհամապատասխանող բիզնես

Եթե նախորդ երեք էջերում ներկայացված էր, թե որ սուբյեկտները կարող են սույն ծրագրի շրջանակներում դիմել «***Սահմանված չափանիշներին համապատասխանող անկախ կենդանի միջոցառման***» անցկացման դրամաշնորհի համար, ապա այստեղ ներկայացված է, թե որոնք ***չեն կարող դիմել.***

- Հանրային կորպորացիաները կամ այն սուբյեկտները, որոնց մեծ մասը պատկանում է հանրային կորպորացիային և վերահսկվում է դրա կողմից:
- Այն սուբյեկտները, որոնք հանդիսանում են ավելի քան հինգ նահանգներում կամ մեկ այլ երկրում գործող կազմակերպությունների սեփականատեր կամ ղեկավարում են դրանք, կամ պատկանում են այնպիսի կազմակերպության, որը հանդիսանում է ավելի քան հինգ նահանգներում կամ մեկ այլ երկրում գործող կազմակերպությունների սեփականատեր կամ ղեկավարում է դրանք:
- Այն սուբյեկտները, որոնց վաստակած համախառն եկամտի 75 տոկոսից պակասն է ստացվում Կալիֆոռնիայում:
- Ցույց է տալիս Կալիֆոռնիայում 30 տոկոսից պակաս եկամուտների տոկոսային անկում հաշվետու ժամանակաշրջանի համար՝ համեմատած 2020թ.-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների և 2019թ.-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հետ:
- Նահանգում ֆիզիկական ներկայություն չունեցող և նահանգում գլխամասային գրասենյակ չունեցող բիզնեսներ:
- Այն բիզնեսները, որոնք հիմնականում զբաղված են քաղաքական կամ լոբբիստական գործունեությամբ, անկախ նրանից՝ կազմակերպությունը գրանցված է որպես 501(c)(3), 501(c)(6), թե 501(c)(19):
- Պասիվ բիզնեսները, ներդրումային ընկերություններն ու ներդրողներ, որոնք իրենց հարկային հայտարարագրերում ներկայացնում են E հավելվածը:
- Ֆինանսական հաստատությունները կամ բիզնեսները, որոնք հիմնականում զբաղվում են վարկավորման բիզնեսով, օրինակ՝ բանկերը, ֆինանսական ընկերությունները և ֆակտորինգային ընկերությունները:
- Այն բիզնեսները, որոնք զբաղվում են ցանկացած գործունեությամբ, որն անօրինական է՝ համաձայն դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրության:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Սահմանված չափանիշներին չհամապատասխանող բիզնես

- Բիզնեսներ, որոնք սահմանափակում են հովանավորչությունը հնարավորությունից բացի ցանկացած այլ պատճառով:
- Կասկածելի բիզնեսներ:
- Բիզնեսներ, որոնց սեփականատիրոջ կապիտալի մասնաբաժինը կազմում է 10 տոկոսից ավելին, և որը համապատասխանում է հետևյալ չափանիշներից մեկին կամ մի քանիսին՝
  i. Սեփականատերը նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է կամ սեփականատիրոջ դեմ կայացվել է քաղաքացիական դատավճիռ, կամ նրա նկատմամբ սկսվել է պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի որևէ ձև, այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան՝ խարդախության կամ քրեական հանցագործության համար՝ կապված դաշնային, նահանգային կամ տեղական հանրային գործարք կամ պայմանագիր կնքելու, կնքելու փորձի կամ հանրային գործարքի շրջանակներում դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման կամ յուրացման, գողության, կեղծիքի, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ տվյալների ներկայացման կամ գողացված գույք ձեռք բերելու հետ:
  ii. Դաշնային, նահանգային կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփականատերը ներկայումս մեղադրվում է կամ այլ կերպ նրա դեմ քրեական կամ քաղաքացիական մեղադրանք է առաջադրվել՝ «i» կետում նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար:

- Փոխկապակցված ընկերությունները, ինչպես սահմանված է Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 13-րդ հոդվածի 121.103 բաժնում:
- Կալիֆոռնիայի Փոքր բիզնեսի շահերի պաշտպանության գրասենյակի կողմից (CalOSBA) ընտրված բիզնեսները, որոնք համապատասխանում են COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված աջակցության դրամաշնորհային ծրագրի նախորդ փուլերում սահմանված սահմանափակումներին և բացառություններին:

# Միջոցների թույլատրելի օգտագործում

Սույն բաժնի համաձայն հատկացված դրամաշնորհային գումարները կօգտագործվեն միայն COVID-19 համավարակի և դրա հետ կապված առողջության պահպանման և անվտանգության նկատառումներով սահմանափակումների, բիզնեսի ընդհատումների կամ փակման հետևանքով առաջացած ծախսերի համար, որոնց պատճառը եղել է COVID-19 համավարակը, այդ թվում՝

- Աշխատողների ծախսերը՝ ներառյալ աշխատավարձի ծախսերը, առողջապահական նպաստները, հիվանդության, առողջական կամ ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարվող արձակուրդը և ապահովագրավճարները:
- Շրջանառու կապիտալը և վերադիր ծախսերը, այդ թվում՝ վարձավճարը, կոմունալ ծառայությունները, հիփոթեքի մայր գումարը և տոկոսավճարները, բայց բացառելով հիփոթեքային վարկի կանխավճարները և պարտքային պարտավորությունները՝ ներառյալ մայր գումարը և տոկոսները, որոնք ծագել են մինչև 2020 թվականի մարտի 1-ը:
- Ծախսեր, որոնք կապված են բիզնես գործունեության վերաբացման հետ՝ դրա ամբողջությամբ կամ մասնակի փակվելուց հետո՝ COVID-19-ի հետ կապված առողջության պահպանման և անվտանգության նկատառումներով պետության կողմից պարտադրված սահմանափակումների և բիզնեսի փակման պատճառով:
- Ծախսեր, որոնք կապված են COVID-19-ին առնչվող դաշնային, նահանգային կամ տեղական կանոնների հետ, որոնք վերաբերում են բիզնեսի վերաբացման համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումների, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ սարքավորումների, պլեքսիգլասից պատնեշների, բացօթյա ճաշարանների, անձնական պաշտպանիչ միջոցների (PPE), թեստավորման և աշխատողների թրեյնինգի ծախսերին:
- Covid-19-ի հետ կապված ցանկացած այլ ծախս, որը դեռ չի փոխհատուցվել դրամաշնորհների, չվերադարձվող վարկերի կամ դաշնային, նահանգային, շրջանային կամ քաղաքային այլ օգնության ծրագրերի միջոցով:
- COVID-19-ի հետ կապված ցանկացած այլ ծախս, որը չի հանդիսանում մարդկային ռեսուրսների ծախս Medicaid-ի պետական մասնաբաժնի հետ կապված, աշխատողների բոնուսներ, աշխատանքից ազատման վճարներ, հարկեր, իրավաբանական հաշիվներ, անձնական ծախսեր կամ այլ ծախսեր, որոնք կապված չեն COVID-19-ի ազդեցության հետ, ապահովագրության կողմից վնասների փոխհատուցում կամ նվիրաբերված իրերի կամ ծառայությունների համար դոնորներին փոխհատուցում:

# Պահանջվող փաստաթղթեր

Հետևյալ բոլոր փաստաթղթերը պահանջվում են և պետք է վերբեռնվեն պորտալում՝

1. **Հայտատուի հավաստագիր (PDF)**
   Պետք է լինի լրացված և ստորագրված՝ վեբ հավելվածում և օժանդակ փաստաթղթերում ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը հաստատելու համար։

2. **Բիզնեսի ֆինանսական հաշվետվություններ (PDF)**
   - Պետք է ներառված լինեն 2019 թվականի բիզնեսի դաշնային հարկային հայտարարագրերի բոլոր էջերը
   - Պետք է ներառված լինեն 2019 թվականի բիզնեսի Կալիֆոռնիայի հարկային հայտարարագրերի բոլոր էջերը
   - Պետք է ներառված լինեն 2020 թվականի բիզնեսի դաշնային հարկային հայտարարագրերի բոլոր էջերը
   - Պետք է ներառված լինեն 2020 թվականի բիզնեսի Կալիֆոռնիայի հարկային հայտարարագրերի բոլոր էջերը

3. **Կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ (PDF կամ JPEG)**
   Վարորդական վկայական կամ անձնագիր (ժամկետանց անձը հաստատող փաստաթղթերը չեն ընդունվում)

4. **Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (PDF)**
   - 2019 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ
   - 2020 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

5. **Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին** (որը պետք է ակտիվ լինի) կամ տեղական համայնքապետարան, ըստ անհրաժեշտության, ձեր բիզնեսի մասին տեղեկություններով՝ կցված հետևյալ փաստաթղթերով **(PDF)**՝
   - Ընկերության կանոնադրությունը
   - Կազմակերպության վկայականը
   - Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանումը
   - Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան (անհատ ձեռնարկատերերը կարող են չտրամադրել ֆիկտիվ անվանումը)

6. **Միայն ոչ առևտրային կազմակերպությունների համար. IRS-ի (Հարկային վարչության) կողմից ստացված հարկերից ազատման մասին ամենավերջին նամակը (PDF)**

7. **ՆՇՈՒՄ. Պետք է ներկայացվի Կալիֆոռնիայի պետքարտուղարին՝ որպես ապացույց, որ բիզնեսը օրինական գործունեություն է իրականացնում Կալիֆոռնիա նահանգում մինչև 2019 թվականի հունիսի 1-ը։**



# ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ

# Հայտատուի հավաստագիր

Որպես դիմումի գործընթացի մաս, ձեզանից կպահանջվի վեբ հավելվածում և օժանդակ փաստաթղթերում հաստատել ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը՝ ստորագրելով Հայտատուի հավաստագիրը:

Հայտատուի հավաստագիրը հասանելի կլինի էլեկտրոնային եղանակով, որպեսզի դուք այն ներբեռնեք և լրացնեք: Հայտատուի ստորագրած հավաստագիրը պարտադիր փաստաթուղթ է այս դրամաշնորհային ծրագրի գործընթացում և պետք է վերբեռնվի պորտալում PDF ձևաչափով:

Դուք կարող եք լրացնել Հայտատուի հավաստագիրը երկու եղանակով՝

1. Ներբեռնել և ստորագրել հավաստագիրը էլեկտրոնային եղանակով կամ
2. Տպել և լրացնել ձևը ձեռքով:

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագիրը էլեկտրոնային եղանակով

## Քայլ 1

Սեղմեք ներբեռնման պատկերակը՝ ներբեռնելու և պահպանելու համար Հայտատուի հավաստագիրը ձեր սարքում: ⭳





## Քայլ 2

Գտեք Հայտատուի հավաստագիրը ձեր սարքում և բացեք ֆայլն այնտեղից: Հայտատուի հավաստագիրը կբացվի PDF ֆայլի տեսքով:



## Քայլ 3

Լրացրեք Հայտատուի հավաստագիրը՝ մուտքագրելով ձեր անվան սկզբնատառերը բոլոր համարակալված նիշերի կողքին, այնուհետև մուտքագրելով ձեր ստորագրությունը և բիզնեսի տվյալները վերջին էջում:



## Քայլ 4

Հայտատուի հավաստագիրը լրացնելուց հետո կրկին այն պահպանեք՝ անցնելով Ֆայլ > Պահպանել կամ ստեղնաշարի վրա սեղմելով CTRL+S՝ ամբողջությամբ լրացված Հայտատուի հավաստագիրը պահպանելու համար:

## Քայլ 5

Վերբեռնեք լրացված հայտատուի հավաստագիրը պորտալում PDF ձևաչափով դիմումի ներկայացման ժամանակ:

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագիրը ձեռքով

## Քայլ 1

Տպեք Հայտատուի հավաստագիրը՝ սեղմելով տպիչի պատկերակը:




**CALIFORNIA SMALL BUSINESS COVID-19 RELIEF GRANT PROGRAM**

**Applicant Certifications**

In connection with the California Small Business COVID-19 Relief Grant Program (the "Program") funded by the State of California (the "State") and administered by the California Office of the Small Business Advocate ("CalOSBA") within the Governor's Office of Business and Economic Development ("GO-Biz") the undersigned, constituting an authorized representative of the below-referenced applicant business (the "Applicant"), acknowledges and agrees, on behalf of the Applicant, that the State, CalOSBA, GO-Biz and B.S.D. Capital, Inc. dba Lendistry ("Lendistry"), as the designated intermediary of the Program, each may rely on the below certifications in determining the Applicant's eligibility for the Program and receipt of a grant under the Program.

The undersigned further acknowledges and agrees that if (i) any of the following certifications are untrue, (ii) the Applicant knowingly makes any false or misleading statement or material omission in the information or materials required or requested from the Applicant, or (iii) the Applicant uses any grant funds for any unauthorized purpose, the State, CalOSBA, GO-Biz and/or Lendistry may require the Applicant to repay such grant funds or take any other legal or equitable recourse available, including, without limitation, by seeking remedies for fraud.

**By executing this document, the Applicant hereby certifies to all of the following (please initial next to each of the certifications below):**

___ 1. The undersigned signatory is a duly authorized representative and owner of the Applicant and has full authority to make the certifications referenced herein on the Applicant's behalf.

___ 2. The Applicant is currently an active business operating since at least June 1, 2019. The Applicant is currently operating or has a clear plan to re-open once the State of California permits re-opening of the business. The Applicant acknowledges and agrees that if the Applicant receives a grant and the Applicant's business ceases to operate, the Applicant may be subject to return of all or any portion of such grant.

___ 3. The Applicant has a principal office in the State of California and, subject to the certification made in (2), above, is presently operating in the State of California.

___ 4. The Applicant's business has been adversely impacted by COVID-19 and the health and safety restrictions have resulted in business interruptions, business closures, or similar impacts incurred as a

## Քայլ 2

Լրացրեք Հայտատուի հավաստագիրը ընթեռնելի ձեռնագրով՝ մուգ գույնի գրիչով:

## Քայլ 3

Հայտատուի հավաստագիրը լրացնելուց հետո կրկին այն պահպանեք՝ անցնելով Ֆայլ > Պահպանել կամ ստեղնաշարի վրա սեղմելով CTRL+S՝ ամբողջությամբ լրացված Հայտատուի հավաստագիրը պահպանելու համար:

## Քայլ 5

Վերբեռնեք լրացված հայտատուի հավաստագիրը պորտալում PDF ձևաչափով դիմումի ներկայացման ժամանակ:



# ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

# Օրինակ՝ Դաշնային հարկային հայտարարագրեր

## Շահույթ հետապնդող բիզնեսներ

1120 ձև



1065 ձև



1040 ձև



2019

1120 ձև



1065 ձև



1040 ձև



2020

## Ոչ առևտրային կազմակերպություններ



2019



2020

# Օրինակ՝ Կալիֆոռնիայի հարկային հայտարարագրեր

## Շահույթ հետապնդող բիզնեսներ

100 ձև



565 ձև



540 ձև



2019

100 ձև



565 ձև



540 ձև



2020

## Ոչ առևտրային կազմակերպություններ

199 ձև



RRF-1



CT-TR-1



2019







# Օրինակ՝ Կառավարության կողմից տրված լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ (ID)

## Կառավարության կողմից տրված ID-ների ընդունելի ձևեր




ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ




ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ID-ի հետևյալ ձևերը **ՉԵՆ** ընդունվելու՝

- Ժամկետանց ID-ներ
- Ուղետոմսեր
- Դպրոցի ID-ներ
- Միության ID-ներ
- Աշխատանքային անվանաքարտեր (բեյջեր)
- Գրադարանային քարտեր

# Օրինակ՝ Պաշտոնական դիմում Կալիֆորնիայի պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան

## Ընկերության կանոնադրությունը



3767456

ARTICLES OF INCORPORATION
OF
MIDDLE TREE INCORPORATED

FILED
Secretary of State
State of California
MAR 16 2015

**ARTICLE I**

The name of this corporation is Middle Tree Incorporated ("Corporation").

**ARTICLE II**

A. This Corporation is a nonprofit public benefit corporation and is not organized for the private gain of any person. It is organized under the Nonprofit Public Benefit Corporation Law for public and charitable purposes. The specific purpose of this Corporation is to manage, operate, guide, direct and promote the Corporation.

B. This Corporation is organized and operated exclusively for educational and charitable purposes pursuant to and within the meaning of Section 501(c)(3) of the Internal Revenue Code of 1986, as amended (the "Code" or "I.R.C."), or the corresponding provision of any future United States Internal Revenue law. Notwithstanding any other provision of these articles, the Corporation shall not, except to an insubstantial degree, engage in other activities or exercise of power that do not further the purpose of the Corporation. The Corporation shall not carry on any or other activities not permitted to be carried on by: (i) a corporation exempt from federal income tax under Section 501(c)(3) of the Code, or the corresponding section of any future federal tax code; or (ii) by a corporation, contributions of which are deductible under Section 170(c)(2) of the Code, or the corresponding section of any future federal tax code.

**ARTICLE III**

The name and address in the State of California of this Corporation's initial agent for service of process is: Registered Agents Inc.

**ARTICLE IV**

The initial street address of the corporation is:

Middle Tree
522 S. Indian Hill Blvd #205
Claremont, CA
91711

The initial mailing address of the corporation is:

ARTICLES OF INCORPORATION — PAGE 1 OF 3
MIDDLE TREE INCORPORATED

## Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանումը



State of California
Bill Jones
Secretary of State

LIMITED LIABILITY COMPANY
ARTICLES OF ORGANIZATION

A $70.00 filing fee must accompany this form.
IMPORTANT – Read instructions before completing this form.

200224710133

FILED
In the Office of the Secretary of State
of the State of California
AUG 28 2002
BILL JONES, Secretary of State

This Space For Filing Use Only

1. Name of the limited liability company (end the name with the words "Limited Liability Company," " Ltd. Liability Co.," or the abbreviations "LLC" or "L.L.C.")
Keystone NPS LLC
2. The purpose of the limited liability company is to engage in any lawful act or activity for which a limited liability company may be organized under the Beverly-Killea limited liability company act.
3. Name the agent for service of process and check the appropriate provision below:
National Registered Agents, Inc. which is
[ ] an individual residing in California. Proceed to item 4.
[X] a corporation which has filed a certificate pursuant to section 1505. Proceed to item 5.
4. If an individual, California address of the agent for service of process:
Address:
City: State: CA Zip Code:
5. The limited liability company will be managed by: (check one)
[ ] one manager [ ] more than one manager [X] single member limited liability company [ ] all limited liability company members
6. Other matters to be included in this certificate may be set forth on separate attached pages and are made a part of this certificate. Other matters may include the latest date on which the limited liability company is to dissolve.
7. Number of pages attached, if any: 0
8. Type of business of the limited liability company. (For informational purposes only)
treatment centers and services for at-risk youth
9. **DECLARATION:** It is hereby declared that I am the person who executed this instrument, which execution is my act and deed.

Signature of Organizer — Andrea C. Barach, Type or Print Name of Organizer

August 27, 2002
Date

10. RETURN TO:
NAME
FIRM
ADDRESS
CITY/STATE
ZIP CODE

SEC/STATE (REV. 12/99)
FORM LLC-1 – FILING FEE $70.00
Approved by Secretary of State

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Օրինակ՝ Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան

## Կազմակերպության վկայականը


THIS STATEMENT IS A PUBLIC RECORD

FILING STAMP ONLY

San Francisco County Clerk
City Hall, Room 168
San Francisco, CA 94102-4678
www.sfgov.org/countyclerk

Any alterations, deletions, or other format to this two-page form will not be accepted for filing by the Office of the SF County Clerk.

FICTITIOUS BUSINESS NAME STATEMENT

## Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան

Միայն Անհատ ձեռնարկատերերի համար


CITY OF LONG BEACH, CALIFORNIA
BUSINESS LICENSE
OWNERSHIP NON-TRANSFERABLE

PREPARED: 11/06/2018
P120

THE LICENSEE NAMED BELOW IS AUTHORIZED TO OPERATE THE FOLLOWING:

ACCOUNT NUMBER:
OWNER: ACTION INVESTIGATORS
LOCATED AT: 3860 CHERRY AVE
BUSINESS TYPE: BUSINESS OFFICE
DBA NAME: ACTION AUTO RECOVERY
PRODUCT: BUSINESS

AUTHORIZED BY: JOHN GROSS
DIRECTOR OF FINANCIAL MANAGEMENT

# Օրինակ՝ Հարկերից ազատման նամակ

## Կազմակերպության վկայականը

Միայն ոչ առևտրային կազմակերպությունների համար։



INTERNAL REVENUE SERVICE
P. O. BOX 2508
CINCINNATI, OH 45201

DEPARTMENT OF THE TREASURY

Date: SEP 26 2016

MIDDLE TREE
PO BOX 1643
CLAREMONT, CA 91711

Employer Identification Number:
47-3525937
DLN:
17053231320026
Contact Person:
RENEE RAILEY NORTON ID# 31172
Contact Telephone Number:
(877) 829-5500
Accounting Period Ending:
December 31
Public Charity Status:
170(b)(1)(A)(vi)
Form 990/990-EZ/990-N Required:
Yes
Effective Date of Exemption:
March 16, 2015
Contribution Deductibility:
Yes
Addendum Applies:
No

Dear Applicant:

We're pleased to tell you we determined you're exempt from federal income tax under Internal Revenue Code (IRC) Section 501(c)(3). Donors can deduct contributions they make to you under IRC Section 170. You're also qualified to receive tax deductible bequests, devises, transfers or gifts under Section 2055, 2106, or 2522. This letter could help resolve questions on your exempt status. Please keep it for your records.

Organizations exempt under IRC Section 501(c)(3) are further classified as either public charities or private foundations. We determined you're a public charity under the IRC Section listed at the top of this letter.

If we indicated at the top of this letter that you're required to file Form 990/990-EZ/990-N, our records show you're required to file an annual information return (Form 990 or Form 990-EZ) or electronic notice (Form 990-N, the e-Postcard). If you don't file a required return or notice for three consecutive years, your exempt status will be automatically revoked.

If we indicated at the top of this letter that an addendum applies, the enclosed addendum is an integral part of this letter.

For important information about your responsibilities as a tax-exempt organization, go to www.irs.gov/charities. Enter "4221-PC" in the search bar to view Publication 4221-PC, Compliance Guide for 501(c)(3) Public Charities, which describes your recordkeeping, reporting, and disclosure requirements.



# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

# Խորհուրդ #1. Ստուգեք ձեր NAICS կոդը

Իրավունակ հայտատուները պետք է նշված լինեն Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) կամ Հարկերից ազատված սուբյեկտների ազգային դասակարգման (NTEE) կոդերից մեկով, որոնք ներկայացված են **5-6 էջերում**:

Ստուգելու համար ձեր NAICS կոդը, անցեք այստեղ՝ https://www.naics.com/search/:



# Խորհուրդ #2. Օգտագործեք վավեր էլփոստի հասցե

**Համոզվեք, որ վավեր էլփոստի հասցե եք նշել, և որ այն ճիշտ է գրված դիմումում:**

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած էլփոստի հասցեին: Որոշ էլփոստի հասցեներ կարող է չճանաչել Lendistry-ի համակարգը, ինչը կարող է հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումներին:

Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր էլ. հասցե, կապ հաստատեք մեր զանգերի կենտրոնի հետ (888) 984-1173 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 7:00-19:00, PST (Խաղաղօվկիանոսյան ստանդարտ ժամանակ)՝ ձեր տվյալները թարմացնելու համար:

Նոր դիմում ՄԻ՛ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:

## Անվավեր էլփոստի հասցեներ

Հետևյալ էլփոստի հասցեները մեր համակարգը չի ընդունի կամ ճանաչի՝

Էլփոստի հասցեներ, որոնք *սկսվում են* **info@**
Օ*րինակ*՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք *ավարտվում են* **@contact.com** կամ **@noreply.com**
Օրինակ՝ mycompany@contact.com
Օրինակ՝ mycompany@noreply.com

# Խորհուրդ #3. Պատրաստեք ձեր փաստաթղթերը PDF ձևաչափով

**Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել Պորտալում <u>միայն PDF ձևաչափով:</u>** Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է լինեն պարզ, ուղիղ դիրքով և չպարունակեն խանգարող հետնապատկերներ:

Կարևոր դիտողություններ՝ փաստաթղթերի վերբեռնման հետ կապված.

1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով (Կառավարության կողմից տրված ինքնությունը հաստատող փաստաթուղթը կարող է ներկայացվել PDF կամ JPEG ձևաչափով):
2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#$%^&*()_+):
4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն:

**Չունե՞ք սկաներ:**
Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել անվճար սկանավորման բջջային հավելվածից:

**Genius սկանավորում**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

**Adobe սկանավորում**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

## Օրինակ՝ Ճիշտ վերբեռնում




Փաստաթուղթը պետք է հստակ երևա, լինի ուղիղ դիրքով:

## Օրինակ՝ Սխալ վերբեռնում




1




2

1. Փաստաթուղթը ուղիղ դիրքով չէ:
2. Փաստաթուղթը պահել են պատուհանի դիմաց (շեղող ֆոն), և լուսանկարում ձեռք է երևում:

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին

**Ի՞նչ է իրենից ներկայացնում Persona-ն**

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար։ Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարը ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգումներ կատարելով։

- Հայտատուները պետք է հաստատեն իրենց ինքնությունը Persona-ի միջոցով՝ վերբեռնելով կառավարության կողմից տրված վավեր անձը հաստատող փաստաթղթի (ID) լուսանկարը։
  - Կառավարության կողմից տրված լուսանկարով անձը հաստատող փաստաթղթի ընդունելի ձևերի մեջ մտնում են՝
  - Վարորդական վկայականը,
  - Միացյալ Նահանգների անձնագիրը, և
  - Նահանգի ID-ն։
- Հայտատուները պետք է նաև ինքնանկար անեն՝ օգտագործելով դիմահայաց դիրքով լուսանկարող տեսախցիկով սարք՝ Persona-ով ստուգումն անցնելու համար։

**Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներ**

1. Օգտագործեք դիմահայաց դիրքով լուսանկարող սարք։ Եթե դուք աշխատում եք հավելվածում նոութբուքով կամ համակարգչով, որը չունի տեսախցիկ, ձեզ կառաջարկվի տարբերակ ցանկացած պահի անցնել ստուգումը Persona-ով շարժական սարքով՝ սեղմելով «Շարունակել մեկ այլ սարքով» և սկանավորելով տրամադրված QR կոդը կամ խնդրելով հղում ուղարկել SMS-ով կամ էլփոստով։
   - Երբ անցնեք ստուգումը Persona-ով ձեր շարժական սարքով, դուք ավտոմատ կերպով կվերահղվեք ձեր հավելվածը՝ ձեր նոութբուքով կամ համակարգչով։

2. *Նախքան* Persona-ն գործարկելը՝ լուսանկարեք կառավարության կողմից տրված ձեր ID-ի երեսակողմն ու դարձերեսը և պահեք լուսանկարներն այն սարքում, որով պետք է ինքնանկար անեք։
   - Դրեք կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթը հարթ սպիտակ մակերեսին և ապահովեք համապատասխան լուսավորություն։
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել։

3. Ինքնանկար անելիս ապահովեք բավարար լուսավորություն՝ ձեր դեմքին ուղղված՝ խուսափելով հետևից վառ լույսի աղբյուրներից։
   - Կանգնեք դատարկ պատի կամ դռան առջև և խուսափեք շեղող ֆոնից։
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել։

*Շարունակությունը՝ հաջորդ էջում։*

# Ինչպես հաստատել ինքնությունը Persona-ով

## Քայլ 1

Սեղմեք «**Սկսել ստուգումը**», այնուհետև ընտրեք կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթը, որը ցանկանում եք օգտագործել՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:







## Քայլ 2

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **երեսակողմը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տես 26-րդ էջը՝ այս քայլը կատարելու խորհուրդների համար:







*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես հաստատել ինքնությունը Persona-ով

## Քայլ 3

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **հարձերեսը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տե՛ս 26-րդ էջը՝ այս քայլը կատարելու խորհուրդների համար:







## Քայլ 4

Եթե օգտագործում եք **դիմահայաց դիրքով** լուսանկարող տեսախցիկով սարք, հետևեք էկրանի հուշումներին ինքնանկար անելիս՝ նայելով առաջ, ձախ և հետո աջ: Տե՛ս 26-րդ էջը՝ այս քայլը կատարելու խորհուրդների համար: Ավարտելուց հետո ընտրեք «Կատարված» և կվերահղվեք հավելված:






# Խորհուրդ #5. Օգտագործեք Google Chrome-ը

Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Ուրիշ վեբ զննարկիչներ կարող են չաջակցել մեր ինտերֆեյսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ https://www.google.com/chrome/:

Նախքան դիմումին անցնելը՝ կատարեք հետևյալ գործողությունները Google Chrome-ում՝

1. **Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը**
2. **Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**
3. **Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը**

## Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը

Քեշ հիշողության մեջ պարունակվող ինֆորմացիան այն ինֆորմացիան է, որը պահպանվել է նախկինում օգտագործած վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում կիրառվում է զննարկման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ ինֆորմացիան ավտոմատ կերպով ավելացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող ինֆորմացիան կարող է ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրած տվյալներ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

## Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

## Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը

Մեր դիմումաձևում կան բազմաթիվ բացվող պատուհաններով հաղորդագրություններ, որոնք կիրառվում են ձեր տրամադրած տեղեկատվության ճշգրտությունը հաստատելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես մաքրել քեշ հիշողությունը

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Մաքրել զննարկման տվյալները**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Մաքրել տվյալները**»:




*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը

## Քայլ 1

Սեղմեք ձեր վեբ զննարկիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը, այնուհետև ընտրեք «**Նոր ինկոգնիտո պատուհան**»:




## Քայլ 2

Ձեր զննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:




*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես հանել բացվող պատուհանների արգելափակումը

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Կայքի կարգավորումներ**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Բացվող պատուհաններ և վերահղումներ**»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը փոխվի՝ «**Արգելափակվածից**» դառնալով «**Թույլատրված**»:








# ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

# Ստուգման գործընթացը

**Ինչպե՞ս կիմանամ, որ ինձ դրամաշնորհ են տրամադրել:**
Այս ծրագրի համար դիմելու գործընթացը ունի վավերացման մի քանի փուլ: Դրամաշնորհը ստանալու համար առաջին հերթին դուք պետք է համապատասխանեք ծրագրին դիմելու իրավունակության նվազագույն պահանջներին: **Կարևոր դիտողություն. Նվազագույն համապատասխանության պահանջների բավարարումը չի երաշխավորում դրամաշնորհի տրամադրումը:**

Երբ արդեն որոշվի, որ դուք իրավունակ եք այս ծրագրին դիմելու համար, ձեր դիմումը կանցնի վերջնական վավերացում՝ որոշում կայացնելու համար՝ արդյոք ձեզ հաստատե՞ն, թե՞ մերժեն ֆինանսավորում տրամադրել: Վավերացման գործընթացի շրջանակներում **ձեզնից կպահանջվի որոշ տեղեկություններ հաստատել ուղիղ հեռախոսակապով:** Lendistry-ի թիմի անդամը կապ կհաստատի անմիջապես ձեզ հետ՝ այս գործընթացն ավարտելու համար:

Ձեր դիմումն ամբողջովին վավերացնելուց հետո դուք նամակ կստանաք Lendistry-ից, որով ձեզ կտեղեկացվի, որ ձեզ հաստատել կամ մերժել են տրամադրել դրամաշնորհային ֆինանսավորում:

**Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ դիմումի կարգավիճակը:**
Դուք ցանկացած պահի կարող եք ստուգել ձեր դիմումի կարգավիճակը՝ մուտք գործելով Lendistry-ի պորտալ՝ օգտագործելով ձեր գրանցած օգտանունը, գաղտնաբառը և բջջային համարը: Մուտք գործելուց հետո կարգավիճակը կհայտնվի կառավարման վահանակին:

**Մուտք գործեք Lendistry-ի պորտալ այստեղ՝** cavenues.mylendistry.com/landing

**Իմ փաստաթղթերը և բանկային տվյալները ամբողջովին վավերացվել են, և ինձ հաստատել են ֆինանսավորման համար: Ե՞րբ ես կստանամ ֆինանսավորումը:**
Երբ ձեր դիմումը լիովին վավերացվի և հաստատվի դրամաշնորհային ֆինանսավորման համար, ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի կդառնան **DocuSign-ի փաստաթղթի** տեսքով Lendistry-ի պորտալում: Մուտք գործեք և հետևեք DocuSign-ի ցուցումներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը կամ ստորագրությունը դնելու և ամսաթիվը նշելու համար:

**Մուտք գործեք Lendistry-ի պորտալ այստեղ՝** cavenues.mylendistry.com/landing

**Կարևոր դիտողություն. Ձեր դրամական միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ դա չեք լրացրել:**

# Զանգերի կենտրոն

# 888-984-1173

**Երկուշաբթի - ուրբաթ**
**7:00 - 19:00, PST (Խաղաղօվկիանոսյան ստանդարտ ժամանակ)**

Արագ հղումներ՝

Ծրագրի համառոտ նկարագրություն
Սահմանումներ
Սահմանված չափանիշներին չհամապատասխանող բիզնես
Միջոցների թույլատրելի օգտագործում
Պահանջվող փաստաթղթեր
Ինչպես լրացնել դիմումի հավաստագիրը
Պահանջվող փաստաթղթերի օրինակ
Դիմումը ներկայացնելու խորհուրդներ
Ստուգման գործընթացը

